

իր շուրջը խմբելով Ամերիկական գործիչներու մեծ թիւ մը, գրաւելով բոլորին համա-կրանքն ու հիացումը, եւ ներշնչելով ու առաջնորդելով զանոնք ազգային ծառայութեանց:

Անա այս կարգի անսպասելի արժանիքներով մեկուն Յոբելեանն է որ կը կատարուի: Եկեղեցականի մը, որ աւելի քան քսան տարիներ ծառայած է իր ժողովուրդին՝ դիւրով, խօսքով եւ գործով, իր ասիանի արժանաւայել գիտակցութեամբ, որ «սակաւ ընտելաթմբերու առանձնաւնորոն է միայն»:

Այս տոնախմբութեան մէջ, իր մէջի, արտի, գրչի եւ խօսքի շնորհներէն աւելի Հայ Եկեղեցիի մտածումն է որ կը փառաւորուի իր արժանաւոր պատշոնին յոբելեանով: Սահակներու, Մեսրոպներու եւ Ներսէսներու հոգին կեցող բախն ոյժը, որ տարիներու մօտը գծախառնութեանց մէջ պահած է միշտ իր ներքին կենսականութիւնը, այսօր նորէն յարգանքի եւ նուիրումի առաւելով կ'ըլլայ Գարեգին Սրբազանի պատուական անձին մէջ: Այդ է պատճառ անտարակոյս որ Յոբելեանական այս տոնախմբութիւնը կը գուգաղիպի իր Կարողիկոսական ընտելութեան՝ յԱթոռ Մեծի Տանն Կիլիկիոյ:

Սիոն, Վեհաւանքն ու Սրբազան Յոբելեանքին կը մտադրէ ամեն բանէ առաջ Բաշառող արեւածառութիւն, ազգանուէր ծառայութեան իր նոր ասպարեկին համար, իրեն ազատելի լաւագոյն արգիւններու փափաքով: Այս մաղթանքն է որ ունին իրենց շրթներուն անտարակոյս, ոչ միայն Կիլիկիոյ՝ այլ բովանդակ Հայ ժողովուրդի հաւատացեալ գաւակները:

ՀԱՒԱՏՔԻ ԷՒ ՄՍԱԾՄԱՆ ՑՈԼՔԵՐ

✱ Գործէ այնպէ՛ս, որպէս թէ յսէի Աստուծոյ կօշը. եւ հրաշքաւոր բլլայի համագործակցելու Անոր գործին՝ ապա եւ սեղծագործ արարելով մը: Գիտէի քան մէջդ անխառն եւ իսկական գիտակցութիւնը. կազմակերպէ անձդ, կ'առէ շարին գէ՛մ՝ եւ մէջդ եւ եւ շուրջդ, նպատակ ունենալով ոչ թէ բազմաութիւն մը ստեղծել անկէ՛ գայն գոյնի մղելով, այլ իրապէս նուանել գայն, օգնելով որ լուսաւորուին եւ պայծառակերպուին «Զարեք»:

✱ Ունակութիւն քե՛զ ընելու եւ քսելու ինչ որ կրնայ մարդերը միացնել իրարու հետ... ծառայեցէ՛ք մարդուն, նոյն իսկ ա՛յն մարդուն, որուն չէ՛ք կրնար սիրել անձը:

ԼԵԶՈՒՆԳ-ԻՏԱԿԱՆ

ԻՐԱՆԱԿԱՆ ԱԶԳԵՑՈՒԹԻՒՆԸ

ՀԱՅԵՐԷՆԻ ՎՐԱՅ^(*)

3. Իրական անուններից բոլոր նրանք, որոնք կազմուած են դուխս, անոյց և ունի վերջաւորութեամբ, իրանական են: Հայ մատենագրութիւնը արդէն շատ ժլատ է իրական անունների վերաբերմամբ, եւ եղածներն էլ ոչ թէ իրապէս անուն են, այլ նշանակում են «այսինչի աղջիկը կամ դուստրը»: Տրդատի քոյրը կոչւում էր Խոսրովիդուխա, որովհետեւ Մեծն Խոսրովի աղջիկն էր: Սմբատ Բագրատունու երկու աղջիկները կոչւում էին Սմբատանոյլ եւ Սմբատուհիւ: Հին հայոց մէջ ամօթ էր համարուում ուղղակի կնոջ կամ աղջկայ անունը տալ. ճիշտ ինչպէս այսօր Ղարաբաղում կամ Զանգեզուրում, ուր կանայք կամ օրիորդները կոչւում են «այսինչի աղջիկ»: Երեւոյթը շատ տարբեր է եւրոպական քաղաքակիրթ երկիրների այն սովորութիւնից, որով ամէն մի օրիորդ իր հօր ազգանունով և ամէն մի կին իր ամուսնու ազգանունով է կոչւում, առանց իր իսկական անունն յիշատակութեան: Հին հայոց այս սովորութիւնն էլ ընդհանուր արեւելեան, բայց յատկապէս պարսկական է:

4. Տեղական յատուկ անունները անձնականների համեմատութեամբ մեծ թիւ չեն կազմում. որովհետեւ անձերի անունները հեշտութեամբ փոխւում են, հները մոռացւում և նորերն են գալիս. բայց տեղական անունները շատ երկար կեանք ունին: Ինչպէս արդէն տեսանք, Հայաստանի տեղական անունները Խաչիւրիական անունների շարունակութիւնն են ներկայացնում և միայն նոր ժամանակ աւելացած քաղաքների և գիւղերի անուններն են՝ որ տարբեր են: Սրանցից նրանք՝ որ կրում են ւաս, կեթ, աւան, ապաս վերջաւորութիւնները, պարսկական կազմութիւն ունին,

(*) Շարունակութիւն՝ մեծանուն հեղինակի «Պատմութիւն Հայ Լեզուի» գործին Թ. Գլուխէն: